

**ԹՅՈՒՐՔԱԼԵԶՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ
ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Խորհրդային Միության փլուզումը Թուրքիային արտաքին քաղաքական նոր հնարավորություններ ընձեռեց: Թուրքիան հնարավորություն ստացավ ակտիվացնելու քաղաքականությունը հետխորհրդային թյուրքական երկրներում և սկսել համագործակցության տարրաբնույթ ծրագրեր մշակել ու միջպետական հանդիպումներ կազմակերպել: Այս քաղաքականության բաղկացուցիչ մասն են կազմում նաև թյուրքալեզու երկրների գազաթնաժողովները, որոնք հրավիրվում էին Թուրքիայի ղեկավարության նախաձեռնությամբ և, անշուշտ, հետապնդում որոշակի նպատակներ: Այս գործընթացն ինքնին նոր իրողություն էր, քանի որ առաջին անգամ թյուրքական երկրները հնարավորություն էին ստացել համատեղ հանդիպումներ կազմակերպել և հետագա համագործակցության ծրագրեր մշակել:

Թյուրքալեզու երկրների գազաթնաժողովները մեր կողմից դիտարկվում են թյուրքական երկրների միջև հարաբերություններն ամրապնդելու և ընդհանուր թյուրքական աշխարհ ձևավորելու գործընթացի մաս, որը բաժանել ենք երկու հատվածի: Առաջին հատվածն ընդգրկում է 1992-2010 թթ.: Այս ընթացքում կազմակերպվեցին տասը գազաթնաժողովներ, որոնք թեև կանոնավոր բնույթ չընդունեցին, սակայն կազմակերպական որոշակի մակարդակ ապահովեցին և մասնակից երկրների միջև կոնկրետ համաձայնություններ ձեռք բերվեցին: Երկրորդ հատվածն ընդգրկում է Թյուրքալեզու երկրների համագործակցության խորհրդի գործունեության շրջանը՝ 2011 թ. մինչև օրս: Թյուրքական խորհուրդն ունի միջազգային կազմակերպության կարգավիճակ, առանձին կառույցներ և փորձում է իրականացնել նախորդ գազաթնաժողովներում առաջարկված ծրագրերը:

Հոդվածում փորձ է արվում ներկայացնել թյուրքախոս երկրների գազաթնաժողովների բնույթը, հիմնական նպա-

տակները և գաղափարական հիմքը: Նշված հարցադրումներին պատասխանելու համար անդրադարձ է կատարվում գազաթնաժողովների գործընթացին, առաջադրված գլխավոր խնդիրներին ու արդյունքներին՝ փորձելով կատարել որոշ դիտարկումներ:

ԹՅՈՒՐՔԱԼԵՂՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ
ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ 1992-2010 ԹԹ.
ՁԵՈՔԲԵՐՈՒՄՆԵՐ ԹԵ՛ ԶԱԽՈՂՈՒՄՆԵՐ

1990-ական թթ. սկզբին Թուրքիայի ղեկավարությունն առաջին քայլեր ձեռնարկեց հետխորհրդային թուրքական երկրների հետ համագործակցություն հաստատելու ուղղությամբ: Այդ նպատակով տեղի են ունենում փոխադարձ այցելություններ, հրավիրվում են տարբեր ձևաչափի հանդիպումներ ու գազաթնաժողովներ, որոնց ընթացքում Թուրքիայի նախագահը հանդիպում է թուրքական հինգ երկրների (Ղազախստան, Ղրղզստան, Ուզբեկստան, Թուրքմենստան, Ադրբեյջան) իր պաշտոնակիցների հետ և քննարկում համագործակցության տարբեր ծրագրեր: Հենց սկզբից Թուրքիայի նպատակն էր այդ գազաթնաժողովները վերածել կանոնավոր հանդիպումների և Անկարայի նախաձեռնությամբ առաջադրված ծրագրերով կառուցել թուրքական վեց երկրների միջև առկա հարաբերությունները¹: Մյուս կողմից, Թուրքիայի ղեկավարությունը ոգևորությամբ սկսեց խոսել համաթուրքականության գաղափարների վերածնման և թուրքական աշխարհի ստեղծման մասին: Նման ոգևորությամբ Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալը և վարչապետ Սուլեյման Ռեմիզելը 1992 թ. հոկտեմբերի 30-31-ին Անկարայում կազմակերպեցին թուրքախոս երկրների առաջին գազաթնաժողովը, որին մասնակցում էին Ադրբեյջանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ուզբեկստանի և Թուրքմենստանի նախագահներ Աբուլֆազ Էյսիբելը, Նուրսուլթան Նազարբաևը, Ասկար Ակաևը, Իսլամ Քարիմովը և Սափարմուրադ Նիյազովը: Գազաթնաժողովին հրավիրված էր նաև Տաջիկստանի նախագահը, սակայն երկրում շարունակվող քաղաքացիական պատերազմի պատճառով նա

¹ Dietrich Jung, Wolfgang Piccoli, Turkey at the Crossroads Ottoman Legacies and a Greater Middle East, London & New York, Zed Books, 2001, p. 182.

չմասնակցեց²: Հարկավոր է նշել, որ Տաջիկստանը թուրքախոս երկիր չէ և, ամենայն հավանականությամբ, նրան հրավիրելը կապված էր կենտրոնասիական տարածաշրջանի նկատմամբ Թուրքիայի հավակնությունների հետ:

Առաջին գազաթնաժողովի ընթացքում քննարկվեցին բազում հարցեր, որոնց հիմնական մասն առաջ էր քաշվել Թուրքիայի ղեկավարության կողմից: Անհրաժեշտ է նշել, որ Թ. Օզալը, Ս. Դեմիրելը և արտաքին գործերի նախարար Հ. Չեթինը լայն գործունեություն էին ծավալում արևմտյան և թուրքական երկրների մայրաքաղաքներում՝ Անկարայում ընդունում էին նրանց ներկայացուցիչներին, հաստատում էին կապեր, բանակցություններ էին վարում, ստորագրում էին համաձայնագրեր: Այս ողջ աշխատանքն ուղղված էր ոչ միայն թուրքական երկրներից յուրաքանչյուրի հետ առանձին մերձենալուն, այլև նրանք փորձում էին առաջիկայում այդ երկրները միավորել Թուրքիայի գլխավորությամբ, այսպես կոչված թուրքական աշխարհում³: Թուրքական աշխարհի ստեղծման հեռանկարով ոգևորված Թ. Օզալն ու Ս. Դեմիրելը տուրք էին տվել համաթուրքականության նոր գաղափարներին: Այսպես՝ վարչապետ Ս. Դեմիրելը դեռևս 1992 թ. փետրվարին վստահորեն հայտարարում է, որ Խորհրդային Միության փլուզումը «հսկայական թուրքական աշխարհի» սկիզբն է, որը ձգվելու է Ադրիատիկ ծովից մինչև Չինական Մեծ պատր⁴: Այս տրամաբանությամբ էլ Թուրքիայի ղեկավարությունը հանդես եկավ քաղաքական կամ տնտեսական միություն ստեղծելու նախաձեռնությամբ: Այսպես՝ գազաթնաժողովում բազման խոսքով ելույթ ունեցավ նախագահ Թ. Օզալը՝ նշելով, որ 21-րդ դարը լինելու է թուրքերի դար և առաջարկեց գազաթնաժողովի վերջում ստորագրված փաստաթղթում ընդգրկել «Թուրքական ընդհանուր շուկայի» և «Թուրքական զարգացման ու ներդրումների բանկի» ստեղծման մասին կետերը⁵: Այս առաջարկությանը հավանություն տվեց միայն Ադրբեյջանի նախագահը, իսկ մյուսներն անհանգստությամբ ընդունեցին: Բացի այդ,

² Oran Baskın, Türk Dış Politikası, (Cilt II. 1980-2001) İstanbul, İletişim Yayınları, 2001, s. 388.

³ Е. И. Уразова, Экономическое сотрудничество Турции и тюркских государств СНГ, М., АСТИ-ИЗДАТ, 2003, с. 42.

⁴ “Adriyatik’ten Çin’e Türkiye”, Cumhuriyet, Şubat 24, 1992.

⁵ Baskın Oran, նշվ. աշխ., էջ 388:

Օգալր պնդում էր, որ Ղազախստանը, Թուրքմենստանը և Ուզբեկստանը երաշխավորեն իրենց աջակցությունն արևմտյան շուկաներ տեղափոխվող նավթի ու բնական գազի խողովակաշարերի այն ծրագրերին, որոնք կանցնեն Թուրքիայի տարածքով⁶: Սրան ևս կենտրոնասիական երկրներն այդ ժամանակ պատրաստ չէին և նախկինի պես ռուսական ուղին էին գերադասում: Մյուս կողմից, այդ երկրները շարունակում էին կախված մնալ Ռուսաստանի ռազմական ու տնտեսական օգնությունից, ուստի չէին ցանկանում գայրացնել Մոսկվային՝ Թուրքիայի հետ ավելի մերձենալով⁷: Թյուրքալեզու երկրների առաջին գազաթնաժողովն ավարտվեց Անկարայի հայտարարության ստորագրմամբ, որտեղ խոսք չկար ո՛չ թյուրքական ընդհանուր շուկայի, և ո՛չ էլ թյուրքական բանկի մասին, ինչպես նաև աջակցություն չստացավ Թուրքիայի ուղղությամբ նոր խողովակաշարերի կառուցման նախագիծը⁸: Բացի այդ՝ Թուրքիայի նախագահի առաջարկած ծրագրերին դեմ արտահայտվեցին նորանկախ երկրների ղեկավարները: Այսպես՝ Ուզբեկստանի նախագահ Ի. Քարիմովը հայտարարեց, որ դեմ է թյուրքական աշխարհի գործունեությունը համակարգելու համար որևէ ազգային մեխանիզմի ստեղծմանը, իսկ Ղազախստանի նախագահ Ն. Նազարբաևը, իր երկրում ռուս բնակչությանը նկատի ունենալով, նշեց, որ վետո կդնի ցանկացած հայտարարության վրա, որը ենթադրում է ինչ-որ համակարգի ստեղծում կրոնական կամ էթնիկական հիմունքներով⁹: Փաստորեն Թուրքիայի ղեկավարության այսպիսի ոգևորվածությունը թյուրքական մյուս երկրների ղեկավարները չէին կիսում, ավելին՝ ազատվելով Մոսկվայի վերահսկողությունից, նրանք չէին ցանկանում Ռուսաստանին փոխարինել Թուրքիայով:

Թյուրքախոս երկրների երկրորդ գազաթնաժողովը տեղի ունեցավ 1994 թ. հոկտեմբերի 18-19-ին Ստամբուլում, որին մասնակցում էին կենտրոնասիական երկրների վերոնշյալ

⁶ Նույն տեղում, էջ 389:

⁷ Gareth M. Winrow, “Turkey’s Relations with the Transcaucasus and the Central Asian Republics”, *Perceptions*, March-May, 1996, p. 136.

⁸Ankara Bildirisi, 20.05.2016,

http://www.turkkon.org/Assets/dokuman/11_AnkaraBildirisi1992_1.DevletBaskinlariZirvesi_20140418_104048.pdf

⁹ Baskın Oran, նշվ. աշխ., էջ 389:

ղեկավարները և Ադրբեյջանի նախագահ Հելդար Ալիևը: Այս գազաթնաժողովի ընթացքում քննարկվեցին քաղաքական, կրթական, մշակութային, տնտեսական և մյուս ոլորտներում համագործակցության խնդիրները, ինչպես նաև անդրադարձան արտաքին քաղաքական հարցերին՝ նշելով, որ ժողովուրդների միջև կապեր հաստատելու հիմքերը պետք է համարվեն պատմական, լեզվական և մշակութային ընդհանրությունները: Թյուրքական երկրների ղեկավարները կարևորեցին մշակութային, կրթության և լեզվի դերը հետագա համագործակցության համար, ուստի վավերագրեցին «Թյուրքական մշակութային և արվեստի ընդհանուր ղեկավարում» (Türk Kültür ve Sanatları Ortak Yönetimi-TÜRKSOY) կազմակերպության հիմնադրման փաստաթուղթը, որը ստորագրվել էր թյուրքախոս երկրների մշակութային նախարարությունների կողմից 1993 թ. հուլիսի 12-ին Ալմաթիում¹⁰:

1995 թ. օգոստոսի 27-29-ին Բիշկեքում տեղի ունեցավ թյուրքալեզու երկրների երրորդ գազաթնաժողովը՝ վերոնշյալ նախագահների մասնակցությամբ: Ի տարբերություն նախորդ գազաթնաժողովների, այստեղ ուշադրության կենտրոնում գտնվում էին տնտեսական հարցեր, մասնավորապես առևտրի, ներդրումների, բանկային, տրանսպորտային և այլն¹¹:

Բիշկեքի գազաթնաժողովում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ թյուրքախոս երկրների հաջորդ գազաթնաժողովը գումարվեց 1996 թ. հոկտեմբերի 21-ին Ուզբեկստանի մայրաքաղաք Տաշքենդում: Ըստ էության, այս գազաթնաժողովը որակապես նոր իրողություն էր, քանի որ մասնակից երկրները ղեկավարներն արտահայտեցին տարածաշրջանի նկատմամբ իրենց դիրքորոշումները, որոնք կապված էին հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և շրջակա միջավայրի պահպանման հիմնախնդիրների հետ: Այսպես՝ նախ մեծ տեղ հատկացվեց առևտրատնտեսական համագործակցությանը, ապա քննարկվեցին հեռահաղորդակցության խնդիրները: Այս նպատակով ուշադրություն դարձվեց

¹⁰Istanbul Bildirisi, 22.03.2016,

http://www.turkkon.org/Assets/dokuman/10_IstanbulBildirisi1994_2.DevletBaskanlariZirveBildirisi_20140418_103924.pdf

¹¹Bişkek Bildirisi, 22.03.2016,

http://www.turkkon.org/Assets/dokuman/09_BiskekBildirisi1995_3.DevletBaskanlariZirveBildirisi_20140418_103851.pdf

Եվրոպա-Կովկաս-Ասիա տրանսպորտային միջանցքի (Transport Corridor Europe-Caucasus-Asia-TRACECA) ծրագրին, որի նպատակն էր վերածնել պատմական Մետաքսի ճանապարհը¹²: Տաշքենդի գազաթնաժողովում հիմնադրվեց Թյուրքախոս պետությունների գազաթնաժողովի քարտուղարությունը (Türkçe Konuşan Devletler Zirvesi Sekreteryası), որի հետ կապված հետագա խնդիրների կազմակերպումը հանձնարարվեց արտաքին գործերի նախարարներին¹³: Քարտուղարության հիմնական խնդիրն էր համակարգել գազաթնաժողովների աշխատանքները, պատրաստել համապատասխան փաստաթղթերը և նախապատրաստել հաջորդ հանդիպումը, ինչպես նաև թյուրքական լեզվի և մշակույթի ճանաչման ու տարածման նպատակով կազմակերպել միջոցառումներ, հավաքել, ուսումնասիրել և հրատարակման պատրաստել թյուրքական ժողովուրդների անցյալին ու ներկային վերաբերող պատմական աղբյուրներն ու տեղեկությունները¹⁴: Հարկավոր է փաստել, որ սա վերջին հանդիպումն էր, որին մասնակցում էին բոլոր վեց թյուրքական երկրների ղեկավարները: Մեր դիտարկմամբ Քարտուղարության ստեղծմամբ քայլեր էր ձեռնարկվում գազաթնաժողովներին համակարգված ու կանոնավար բնույթ հաղորդել՝ փորձելով այդ գործընթացին ներգրավել նաև թյուրքական մյուս երկրներին:

Թյուրքախոս երկրների հինգերորդ գազաթնաժողովը գումարվեց 1998 թ. հունիսի 9-ին Ղազախստանի նոր մայրաքաղաք Աստանայում, որին մասնակցում էին Ադրբեյջանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ուզբեկստանի, Թուրքիայի նախագահները, իսկ Թուրքմենստանը ներկայացնում էր մեջիսի նախագահ Սահաթ Մուրադովը: Աստանայի գազաթնաժողովում ընդունվեց Քարտուղարության կանոնադրությունը, որով կարգավորվում էր գազաթնաժողովների կազմակերպման ու անցկացման կարգն ու աշխատանքները¹⁵: Այս գազաթնաժողովում

¹²Taşkent Bildirisi, 28.03.2016,

http://www.turkkon.org/Assets/dokuman/08_TaskentBildirisi1996_4.DevletBaskanlariZirveBildirisi_20140418_103822.pdf

¹³ Նույն տեղում:

¹⁴ Pelin Musabay Bakı, “Avrasya’da Bölgesel İşbirliği Sürecinden İşbirliği Mekanizmasına: Türk Konseyi”, Bilge Strateji, Cilt 6, Sayı 11, Güz 2014, s. 144.

¹⁵ Türkçe Konuşan Ülkeler Devlet Başkanları V. Zirve Bildirisi, 28.03.2016, www.turkkon.org/Assets/dokuman/07_AstanaBildirisi1998_5.DevletBaskanlari

Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը խոսեց թուրքական աշխարհի հոգևոր միության և բարոյական ընկերակցության մասին, որը պետք է ուղղվեր տնտեսական զարգացմանը և կարևորեց թուրքախոս պետությունների նախորդ հինգ հանդիպումները¹⁶: Այդու՛ Դեմիրելը թուրքական աշխարհի ստեղծման ու զարգացման կարևոր հիմքերից էր համարում թուրքախոս երկրների գազաթնաժողովները, որոնք ուղղված էին թուրքական երկրների և Թուրքիայի հարաբերությունների սերտացմանը և կարող էին նպաստել տարածաշրջանում Թուրքիայի դիրքերի ամրապնդմանը:

Թուրքախոս երկրների վեցերորդ գազաթնաժողովը տեղի ունեցավ Բաքվում 2000 թ. ապրիլի 8-ին, որին մասնակցում էին Ադրբեջանի, Ղազախստանի, Ղրղզստանի և Թուրքիայի նախագահները, Թուրքմենստանը և Ուզբեկստանը ներկայացնում էին մեջլիսների նախագահներ Սահաթ Մուրադովը և Էրքին Հալիլովը: Բաքվի հայտարարությունում մասնակիցները դարձյալ նշեցին բարեկամության և համագործակցության մասին՝ ընդգծելով, որ 21-րդ դար մտնում են փոխադարձ հետաքրքրություններով և հավասար հիմքերով համագործակցությամբ հասնելու են նոր ձեռքբերումների¹⁷: Բաքվի գազաթնաժողովի վերջում հրավիրված մամլո ասուլիսի ժամանակ Թուրքիայի նախագահ Ս. Դեմիրելը նշեց. «Արդիական խնդիրները և մեր ապագա մտածմունքներում մի մեծ միության մեջ գտնվելը հաճույքով հավաստում ենք: Մեր եղբայր ժողովուրդների միջև առկա պատմական ու մշակութային կապերի հիմքերով՝ մեր հարաբերությունների զարգացումը և ամրապնդումը զորեղ համառությամբ ուժ է ստանում»¹⁸: Այսինքն՝ Ս.

ZirveBildirisi_20140418_103743.pdf

¹⁶ N. Mamedli, “Integration Issues at Summits of Turkic-Speaking States, Central Asia and the Caucasus”, No. 1(19), 2003, p. 143.

¹⁷ Türkçe Konuşan Ülkeler Devlet Başkanları Zirvesi Bakü Bildirisi, 02.04.2016, www.turkkon.org/Assets/dokuman/06_BakuBildirisi2000_6.DevletBaskanlariZirveBildirisi_20140418_103714.pdf

¹⁸ Cumhurbaşkanı Sayın Süleyman Demirel'in Türkçe Konuşan Ülkeler Devlet Başkanları VI. Zirve Toplantısı Sonunda Düzenlenen Ortak Basın Toplantısında Yaptıkları Açıklama, 05.05.2016, <http://www.tccb.gov.tr/konusmalari-suleyman-demirel/1718/4126/cumhurbaskani-sayin-suleyman-demirelin-turkce-konusan-ulkeler-devlet-baskanlari-vi-zirve-toplantisi-sonunda-duzenlenen-ortak-basin-toplantisinde-yaptikleri-aciklama.html>

Դեմիրելը շարունակում էր իր նախկին հռետորաբանությունը, որի հիմքում դրված էին համաթյուրքականության նոր գաղափարական դրսևորումները, այն է՝ թյուրքական միության ձևավորում: Բացի այդ, ակնհայտ է դառնում, որ Դեմիրելը և ընդհանրապես Թուրքիայի ղեկավարությունը մեծ կարևորություն են տալիս Թուրքիայի և թյուրքական երկրների միջև առկա ընդհանրություններին:

Բաքվի գազաթնաժողովում «թյուրքախոս երկրներ» (Türkçe Konuşan Ülkeler) արտահայտությունն առաջարկվեց փոխարինել «թյուրքալեզու երկրներ» (Türk Dili Konuşan Ülkeler) արտահայտությամբ, որն էլ այս գազաթնաժողովից սկսած օգտագործվում է պաշտոնական փաստաթղթերում: Փաստորեն այսպես ընդգծվում էր լեզվի կարևորությունը, որը դարձել էր Թուրքիայի քաղաքականության մի մասը: Այդու՛ արդի փուլում լեզուն դիտվում էր թյուրքական ծագմամբ երկրներին ու ժողովուրդներին միավորելու ամենակարևոր հիմքերից մեկը:

Թյուրքախոս երկրների յոթերորդ գազաթնաժողովը տեղի ունեցավ Ստամբուլում 2001 թ. ապրիլի 26-27-ին Թուրքիայի նախագահ Ահմեթ Նեջդեթ Սեզերի նախագահությամբ: Այս հանդիպման ժամանակ կոնկրետ խնդիրներ չառանձնացվեցին, այլ հիմնականում քննարկվեցին նախորդ գազաթնաժողովներում առաջադրված հարցերը¹⁹:

Չնայած ձեռք բերված պայմանավորվածություններին հաջորդ տարիների ընթացքում նման ձևաչափով հանդիպումներ չկազմակերպվեցին: Ըստ էության, դա կապված էր Թուրքիայում ստեղծված քաղաքական և տնտեսական ծանր իրադրության հետ, որի պայմաններում թյուրքական ղեկավարությունը չէր կարող նախաձեռնել հանդիպումները: Սա վկայում է այն մասին, որ թյուրքական մյուս պետությունները պակաս հետաքրքրություն էին ցուցաբերում նման հանդիպումներին և Թուրքիայի հանդեպ ունեցած նախկին ակնածանքն այլևս չունեին: Դարձյալ Թուրքիայի նախաձեռնությամբ և նախագահ Ա. Ն. Սեզերի նախագահությամբ հրավիրվեց թյուրքալեզու երկրների թվով ութերորդ գազաթնաժողովը՝ 2006 թ. նոյեմ-

¹⁹ Türk Dili Konuşan Ülkeler Devlet Başkanları Zirvesi İstanbul Bildirisi, 02.04.2016, www.turkkon.org/Assets/dokuman/05_Istanbul2001_7.Devle_BaskanlariZirvesiBildirisi_20140418_103624.pdf

բերի 17-ին Անթալիայում: Գագաթնաժողովին Թուրքմենստանը ներկայացնում էր Անկարայում գտնվող դեսպանը²⁰: Ուզբեկստանի նախագահ Ի. Քարիմովը չմասնակցեց գագաթնաժողովի աշխատանքներին²¹, ավելին՝ հետագայում ևս հրաժարվեց նմանատիպ հանդիպումներից: 2001 թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած ահաբեկչությունից հետո ահաբեկչության դեմ պայքարի խնդիրը դարձավ աշխարհում կարևորագույններից մեկը, որը քննարկման առարկա դարձավ նաև Անթալիայի գագաթնաժողովում: Քաղաքական, տնտեսական և մշակութային բնագավառներում ձեռք բերված նախկին համաձայնագրերի հիման վրա նշվեց համագործակցության ընդլայնման մասին²²: Նախկին գագաթնաժողովների վերջում ստորագրված հայտարարությունների տեքստերը պատրաստվում էին թուրքերեն և ռուսերեն տարբերակներով, որը միշտ առաջացնում էր թուրքական կողմի դժգոհությունը: Անթալիայի հայտարարության տեքստը ստորագրվեց մասնակից երկրների լեզուներով՝ թուրքերեն, ադրբեջաներեն, ղազախերեն և ղրղզերեն: Կարծում ենք, սա թուրքական կողմի համար ուներ կարևոր խորհրդանշական նշանակություն, որը փաստում էր լեզվական ընդհանրության մասին: Սակայն պետք է նշել, որ կենտրոնասիական երկրների ղեկավարները շարունակում էին իրենց ելույթները ռուսերենով, ավելին այդ երկրներն ամբողջովին չընդօրինակեցին թուրքական այբուբենը, հետևաբար Թուրքիայի ակնկալիքները միանշանակ չբավարարվեցին:

Թյուրքախոս երկրների ղեկավարների իններորդ գագաթնաժողովը տեղի ունեցավ 2009 թ. հոկտեմբերի 2-3-ին Նախիջևանում: Գագաթնաժողովի սկզբում ընդգծվեց թյուրքախոս երկրների միջև պատմական, լեզվական և մշակութային կապերի հիման վրա բոլոր բնագավառներում հարաբերությունների զարգացումն ու համագործակցության կարևորությունը: Այս գագաթնաժողովն ավարտվեց «Նախիջևանի հայտարարության» ստորագրմամբ, որտեղ հստակ նշվում էր

²⁰ “Türkçe Konuşan Ülkeler Zirvesi Antalya’da Başladı”, Hürriyet, Kasım 17, 2006.

²¹ “Türkçe Konuşan Ülkeler Zirvesi’nin Sekizincisi Eksik Toplandı”, Zaman, Kasım 17, 2006.

²² Türk Dili Konuşan Ülkeler Devlet Başkanları 8. Doruk Toplantısı Antalya Bildirisi, 21.05.2016, http://www.turkkon.org/Assets/dokuman/04_AntalyaBildirisi2006__8.Devlet_BaskanlariZirvesiortakbildirisi_20140418_103555.pdf

Թյուրքալեզու երկրների համագործակցության խորհրդի (Türk Dili Konuşan Ülkeler İşbirliği Konseyi) հիմնադրման մասին²³: Վերջինն ուղղված էր թյուրքախոս երկրների միջև համագործակցության ամրապնդմանն ու ընդլայնմանը: Հարկավոր է նշել, որ թյուրքախոս երկրների միջև Համագործակցության խորհրդի ստեղծման գաղափարն առաջարկվել էր 2006 թ. Անթալիայի գագաթնաժողովի ժամանակ Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևի կողմից: Մասնակից երկրների ղեկավարներն ընդգծեցին, որ դա հետագայում հարաբերությունները զարգացնելուն միտված մի նոր փուլ է լինելու:

Թյուրքախոս երկրների նախագահները հաստատեցին 2008 թ. նոյեմբերի 21-ին Ստամբուլում ստորագրված համաձայնագիրը, որով հիմնադրվում էր Թյուրքախոս երկրների խորհրդարանական վեհաժողովը (Türk Dili Konuşan Ülkeler Parlamenter Asamblesi- TÜRKPAA)²⁴: Վերջինի նպատակն էր զարկ տալ թյուրքախոս երկրների խորհրդարանների միջև համագործակցությանը քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային, իրավական բնագավառներում²⁵: Նախիջևանում ևս խոսվեց թյուրքական ընդհանուր մշակույթի և դրա պահպանման մասին: Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևն առաջարկեց ստեղծել TÜRKSÖY-ի ֆոնդ, որն ընդունվեց մյուս երկրների ղեկավարների կողմից և հանձնարարվեց այդ երկրների կա-

²³ Türk Dili Konuşan Ülkeler Devlet Başkanları Dokuzuncu Zirvesi Nahçıvan Bildirisi, 21.05.2016, [http://turkkon.org/tr-TR/nahcivan-bildirisi-\(2009\)/4/911/911/290](http://turkkon.org/tr-TR/nahcivan-bildirisi-(2009)/4/911/911/290)

²⁴ The Istanbul Agreement on the Parliamentary Assembly of Turkic-Speaking Countries, 21.05.2016, <http://www.turk-pa.org/documents/IstanbulAgreement.pdf>

²⁵ TÜRKPAA-ի հիմնադրման համաձայնագիրը ստորագրել են Ադրբեջանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Թուրքիայի խորհրդարանների նախագահները: 2009 թ. սեպտեմբերի 29-ին Բաքվում տեղի ունեցավ TÜRKPAA-ի լիազուստար նիստը, որտեղ ստեղծվեցին համապատասխան կառույցներ, և իր գործունեությունն սկսեց քարտուղարությունը, որի կենտրոնը դարձավ Բաքուն: TÜRKPAA-ի կառուցվածքի, գործառույթների և նպատակների մասին ավելի մանրամասն տե՛ս պաշտոնական կայքէջը՝ <http://www.turk-pa.org/>

ռավարություններին աշխատանքներ իրականացնել ֆոնդի հիմնադրման ուղղությամբ²⁶:

Այս ձևաչափով թյուրքախոս երկրների վերջին գագաթնաժողովը տեղի ունեցավ Ստամբուլում 2010 թ. սեպտեմբերի 16-ին: Գագաթնաժողովին մասնակցում էին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը, Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբանը, Ղրղզստանի նախագահ Ռոզա Օթունբաևան և Թուրքմենստանի նախագահ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովը²⁷, սակայն վերջինս իր ստորագրությունը չդրեց գագաթնաժողովի վերջում ստորագրված փաստաթղթի տակ: Թյուրքական խորհրդի հիմնադրման փաստաթուղթը ստորագրեցին Թուրքիայի, Ադրբեջանի, Ղազախստանի և Ղրղզստանի նախագահները և նրանց համաձայնությամբ գլխավոր քարտուղար նշանակվեց թյուրք դիվանագետ Հալիլ Աքրնջըն²⁸: Թյուրքական խորհրդի գլխավոր քարտուղարությունը հաստատվեց Ստամբուլում: Այս գագաթնաժողովի մասնակից երկրների ղեկավարները քննարկեցին քաղաքական, տնտեսական, մշակութային, անվտանգության, ահաբեկչության դեմ պայքարի հարցեր, ինչպես նաև տարածաշրջանային խնդիրներ, մասնավորապես Աֆղանստանում, Իրաքում, Կիպրոսում, Հարավային Կովկասում և թյուրքական երկրներում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ²⁹: Գագաթնաժողովում քննարկվեց նաև թյուրքական ակադեմիայի ստեղծման հարցը: Մասնակից երկրների ղեկավարների համաձայնությամբ թյուրքական ակադեմիան հիմնադրվեց Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում: Ակադեմիայի նպատակներից էր զարկ տալ միջամալսարանական կապերին, համագործակցել համալսարանա-

²⁶ Türk Dili Konuşan Ülkeler Devlet Başkanları Dokuzuncu Zirvesi Nahçıvan Bildirisi, 21.05.2016, [http://turkkon.org/tr-TR/nahcivan-bildirisi-\(2009\)/4/911/911/290](http://turkkon.org/tr-TR/nahcivan-bildirisi-(2009)/4/911/911/290)

²⁷ “Türk Dili Konuşan Ülkeler İşbirliği Konseyi Kuruluyor”, Cumhuriyet, Eylül 6, 2010.

²⁸ Türk Dili Konuşan Ülkeler İstanbul Zirvesi, 25.02.2016, <http://www.turkishnews.com/tr/content/2010/09/28/turk-dili-konusan-ulkeler-istanbul-zirvesi/>

²⁹ Türk Dili Konuşan Ülkeler Devlet Başkanları 10. Zirve Toplantısının Bildirisi, İstanbul, 16 Eylül 2010, 12.04.2016, http://www.turkkon.org/Assets/dokuman/01_a_IstanbulBildirisi_16Eylul2010_Turkce_20140418_102924.pdf

կան կրթության հարցերում, իրականացնել համատեղ գիտական ծրագրեր, ինչպես նաև համատեղ աշխատանքներ իրականացնել TÜRKSOY-ի հետ³⁰: Ստամբուլի համաձայնագրում հատուկ հոդվածով Նախիջևանի համաձայնագրի ստորագրման օրը՝ հոկտեմբերի 3-ը, ընդունվեց որպես թյուրքախոս երկրների համագործակցության օր և որոշվեց ամեն տարի նշել³¹: Ամենայն հավանականությամբ, սա պետք է դառնա թյուրքական միասնության խորհրդանիշը և սկիզբ հանդիսանա համաթյուրքական միջոցառումների առանձնացման համար:

Հարկ է նշել, որ թյուրքախոս երկրների բոլոր գազաթնաժողովներում Թուրքիայի և Ադրբեջանի կողմից բարձրացվում էր արցախյան հիմնախնդիրը, որը փորձում էին դարձնել գազաթնաժողովում քննարկվող օրակարգային հարցերից, բացի այդ՝ նպատակ ունեին հասնել Ադրբեջանին սատարող որոշումների կայացմանը: Սակայն դա տեղի չունեցավ, և Ստամբուլի գազաթնաժողովում թյուրքական պետությունները հայտնեցին իրենց աջակցությունը հակամարտության խաղաղ կարգավորմանը ՄԱԿ-ի և ԵԱՀԽ-ի շրջանակներում, որը հայտարարվեց Կենտրոնական Ասիայի երկրների ղեկավարների ճնշման ներքո³²: Թյուրքական խորհրդի շրջանակներում ևս Թուրքիան և Ադրբեջանը անդրադառնում են այս հարցին՝ նշելով Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքը և ոչ ավելին:

Այսպիսով՝ Թուրքիան, հրավիրելով թյուրքալեզու երկրների գազաթնաժողովները, նպատակ ուներ սերտացնել և ընդլայնել համագործակցությունը թյուրքական երկրների հետ, որն էլ միտված էր տարածաշրջանում նրա ազդեցության հաստատմանը: Այս մասին վկայում են ստորագրված համաձայնագրերը, որոնք ընդգրկում էին քաղաքական, առևտրատնտեսական, կրթամշակութային և անվտանգության ոլորտները:

³⁰ Orhan Kavuncu, “10. Türk Zirvesi: Yeni Ümitlere Yelken Açabilir miyiz?”, Türk Yurdu, Ekim 2010, Yill 99, Sayı 278, 13.04.2016, <https://www.turkyurdu.com.tr/yazar-yazi.php?id=2075>

³¹ Türk Dili Konuşan Ülkeler Devlet Başkanları 10. Zirve Toplantısının Bildirisi, İstanbul, 16 Eylül 2010, 25.02.2016, <http://www.mfa.gov.tr/bildiri.tr.mfa>

³² Г. Демоян, “Тюркские саммиты: цели, задачи, приоритеты и позиция в карабахском вопросе”, Бюллетень научно-образовательного фонда «Нораванк», N 10 (16), 2005, с. 46-54.

Նման գործողությունները պետք է հանգեցնեն թյուրքական աշխարհի ստեղծմանը՝ Թուրքիայի գլխավորությամբ: Թուրքիայի ձեռքբերումներն ավելի քիչ էին, իսկ ձախողումները՝ տեսանելի: Թուրքիան չկարողացավ սերտ համագործակցության դաշտ տեղափոխել թյուրքական երկրների հետ հարաբերությունները, հետևաբար թյուրքական աշխարհի միավորումը իր հովանու ներքո, առայժմ կմնա լոկ գաղափար: Մյուս կողմից, որոշ ձեռքբերումներ ունեցավ, մասնավորապես հաջողվեց կանոնավոր հիմքերի վրա դնել թյուրքական երկրների հանդիպումները՝ ի դեմս Թյուրքական խորհրդի, և ամրապնդել համագործակցությունը, հատկապես մշակութային ոլորտում:

ԹՅՈՒՐՔԱԼԵՋՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ. ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ

Թյուրքալեզու երկրների համագործակցության խորհուրդը հանդիսանում է վերոնշյալ գագաթնաժողովների հիմնական արդյունքը: Ինչպես արդեն նշել ենք, Թուրքիայի հիմնական նպատակներից էր թյուրքական երկրները միավորել մեկ ընդհանուր միության կամ կազմակերպության շրջանակներում: Թեև հաջողվեց ստեղծել բնույթով միայն թյուրքական կազմակերպություն, սակայն ոչ բոլոր թյուրքական երկրներն են անդամակցում, մասնավորապես Թուրքմենստանը և Ուզբեկստանը: Թյուրքական խորհուրդը հանդիսանում է փակ տարածաշրջանային կազմակերպություն, քանի որ դրան կարող են անդամակցել միայն թյուրքական պետությունները³³: Խորհրդի նպատակն է միավորել թյուրքական երկրներին՝ հիմք ընդունելով նրանց պատմական, մշակութային, էթնիկական և լեզվական ընդհանրությունները: Այլ կերպ ասած՝ նշված ընդհանրությունները համարվում են թյուրքական աշխարհի ստեղծման հիմնաքարերը և միաժամանակ դրված են նոր համաթյուրքականության հայեցակարգի հիմքում:

Թյուրքալեզու երկրների համագործակցության խորհրդի առաջին գագաթնաժողովը տեղի ունեցավ 2011 թ. հոկտեմբերի 21-ին Ղազախստանի Ալմաթի քաղաքում՝ «Տնտեսական համագործակցություն» խորագրով: Հանդիպման սկզբում անդամ

³³ Süleyman Sırı Terzioğlu, “Uluslararası Hukuk Açısından Türk Dili Konuşan Ülkeler İşbirliği Konseyi”, Uluslararası Hukuk ve Politika, Cilt 9, Sayı 36, 2013, s. 54-57.

երկրների ղեկավարները նշեցին թյուրքալեզու երկրների միջև հարաբերությունների զարգացման ու ամրապնդման մասին՝ հիմնված պատմական, էթնիկական, լեզվական և մշակութային ընդհանրությունների վրա: Մյուս կողմից, հաստատվեց, որ Թյուրքական խորհուրդը համարվում է ամբողջապես կազմակերպված միջազգային կազմակերպություն, որն ունի իր կառույցները և գործունեության բնագավառները: Ալմաթիի հայտարարությունում առանձնացվում էին տնտեսական, անվտանգության, սոցիալական ու մշակութային խնդիրները: Առավել մեծ ուշադրություն դարձվեց տնտեսական համագործակցության խնդիրներին, ուստի կարևորվեց Թյուրքական գործարար խորհրդի (Turkic Business Council) հիմնադրումը: Հանդիպման ժամանակ մասնակիցները քննարկեցին միջազգային ծրագրեր, մասնավորապես Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթային ուղու, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազի խողովակաշարի անցկացման վերաբերյալ: Բացի այդ՝ նշվեց Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու հիմնադրման մասին, որը պետք է կապող օղակ հանդիսանա թյուրքական երկրների միջև և նպաստի եվրասիական տարածաշրջանում առևտրի ու տնտեսության զարգացմանը: Առանձնահատուկ նշանակություն տրվեց TURKPA-ի գործունեությանը, որը համակարգող մարմին է անդամ-երկրների խորհրդարանների միջև: Թյուրքական աշխարհում ընդհանուր մշակույթի կազմակերպման խնդիրները դրվեցին TURKSOY-ի վրա: Նախատեսվեց ստեղծել Թյուրքական միջհամալսարանական միություն (Turkic Interuniversity Union), որի նպատակն էր զարգացնել հարաբերությունները գիտական ինստիտուտների, կրթական հաստատությունների և գիտնականների միջև, ինչպես նաև փոխանակել ուսանողներ: Համաձայնություն ձեռք բերվեց նաև հիմնադրել Թյուրքական գիտական հետազոտությունների ֆոնդը (Turkic Scientific Research Fund), որի նպատակն էր ուսումնասիրել ու զարգացնել թյուրքական երկրների գիտական ներուժը³⁴: Փաստորեն այս առաջին հանդիպման ընթացքում առանձնացվեցին կոնկրետ խնդիրներ, որոնց իրականացումը հանձնարարվեց Թյուրքական խորհրդի համապատասխան կառույցներին:

³⁴ Türk Dili Konuşan Ülkeler İşbirliği Konseyi 1. Zirvesi Bildirisi Almatı, 21 Ekim 2011, 27.03.2016, http://www.turkkon.org/Assets/dokuman/1_Zirve_Bildirisi_TR_20140418_102727.pdf

Թյուրքական խորհրդի երկրորդ գագաթնաժողովը, «Կրթական, գիտական և մշակութային համագործակցություն» խորագրով, տեղի ունեցավ 2012 թ. օգոստոսի 22-23-ին Ղրղզստանի մայրաքաղաք Բիշկեքում: Հայտարարության սկզբում նշվում է թյուրքական ժողովուրդների միջև միասնության ամրապնդման ցանկությունը՝ ընդհանուր պատմության, լեզվի, ինքնության և մշակույթի հիմքերով: Դարձյալ նշվեց տնտեսության, մշակույթի, կրթության ու գիտության բնագավառներում համագործակցության մասին, ինչպես նաև անդրադարձ կար արտաքին քաղաքական խնդիրներին: Առաջարկվեց հիմնադրել Թյուրքական մշակութային ժառանգության ֆոնդ, որը պետք է աջակցեր թյուրքական ակադեմիայի և TÜRKSOY-ի ծրագրերին ու գործունեությանը: Խնդիր դրվեց հասնել լայնամասշտաբ համագործակցության կրթության ու գիտության բնագավառում, հատկապես աջակցել միասնական այբուբենի հաստատմանը և դասագրքերի ստեղծմանը³⁵: Այս նկատառումով կարևորվեց թյուրքական ակադեմիայի դերը, որը պետք է հանդիսանար գիտական հարթակ թյուրքական պատմության ու լեզվի ուսումնասիրության համար: Առաջարկվեց թյուրքական պատմության վերաբերյալ ուսումնական ձեռնարկներ հրատարակել³⁶: Լեզվի և պատմության առանձնացումը պատահական չէր, քանի որ երկուսն էլ ձևավորում են մտածողություն և կարող են ընդհանուր գաղափարական հիմքեր նախապատրաստել ապագայի համար: Այս հանդիպումից ակնհայտ է դառնում, որ Թյուրքական խորհուրդն ուշադրության կենտրոնում է պահում համագործակցության բոլոր ոլորտները և արդեն ստեղծված կառույցների միջոցով փորձում է կյանքի կոչել նախկին գագաթնաժողովներում առաջադրված ծրագրերը:

Թյուրքական խորհրդի երրորդ գագաթնաժողովը տեղի ունեցավ Ադրբեջանի Գաբալա քաղաքում 2013 թ. օգոստոսի 16-ին՝ «Երիտասարդություն» խորագրով: Ստորագրված հայտարարությունում շեշտվում էր մշակույթի, սպորտի, գիտության և կրթության ոլորտներում համագործակցության մասին,

³⁵ Türk Dili Konuşan Ülkeler Zirvesi Üzerine, 25.02.2016,

<http://www.tuicakademi.org/turk-dili-konusan-ulkeler-zirvesi-uzerine/>

³⁶ Türk Konseyi İkinci Zirvesi Bildirisi Bişkek, 23 Ağustos 2012, 02.04.2016, www.turkkon.org/Assets/dokuman/Biskek_Bildirisi_Turkce_imzali_20140418_102501.pdf

մասնավորապես ուշադրության կենտրոնում էր պատմություն ու գրականություն առարկաների միասնական ուսումնական ձեռնարկների պատրաստման խնդիրը: Անդամ-երկրների միջև տնտեսական համագործակցության ամրապնդման համար Թյուրքական խորհրդի կազմում ստեղծվեցին առանձին խմբեր: Դարձյալ առաջնային համարվեց տրանսպորտային հաղորդակցության խնդիրը, և խորհրդի անդամ-երկրների տրանսպորտի նախարարները ստորագրեցին տրանսպորտի զարգացման համար միասնական համաձայնագիր: Այս հանդիպման ընթացքում քննարկվեց ևս մեկ կարևոր հարց, որը վերաբերում էր թյուրքախոս սփյուռքին: Որոշվեց ակտիվացնել հարաբերությունները թյուրքախոս սփյուռքի հետ և մշակել ու իրականացնել համագործակցության ծրագրեր³⁷: Փաստորեն, կարող ենք ասել, որ Թյուրքական խորհուրդը հավակնում է որոշակի համակարգող գործառույթներ ստանձնել նաև թյուրքախոս սփյուռքում:

Թյուրքական խորհրդի անդամ-երկրների հաջորդ հանդիպումը տեղի ունեցավ 2014 թ. հունիսի 5-ին Թուրքիայի Բողրում քաղաքում՝ «Համագործակցություն տուրիզմի ոլորտում» խորագրով: Ինչպես նախորդ հայտարարություններում, այնպես էլ այս անգամ սկզբից վերահաստատվեց, որ թյուրքալեզու ժողովուրդների ուժը կայանում է ընդհանուր պատմության, լեզվի, մշակույթի և ավանդույթների մեջ: Այս հանդիպմանը մասնակցում էր նաև Թուրքմենստանի նախագահը, սակայն նա չմիացավ խորհրդին և շարունակեց պահպանել դիտորդի կարգավիճակը: Իսկ Ուզբեկստանը դեռևս վերջնականապես չի հրաժարվել խորհրդին անդամակցելուց³⁸: Բողրումի համաձայնագրում առանձնացվեցին տնտեսության, արտաքին քաղաքականության և անվտանգության վերաբերող բաժիններ, սակայն հիմնականում ուշադրություն հատկացվեց տուրիզմի ոլորտին, և անդամ-երկրները որոշեցին ծրագրեր մշակել այն

³⁷ Türk Dili Konuşan Ülkeler İşbirliği Konseyi Üçüncü Zirve Bildirisi, Gebele, Azerbaycan, 02.04.2016, http://www.turkkon.org/Assets/dokuman/format_deklarasyon_TR_20140418_102229.pdf

³⁸ В. Панфилова, “Союз тюркоязычных стран усилился Туркменистаном”, Независимая газета, 6 июля, 2014.

զարգացնելու համար³⁹: Կարող ենք ասել, որ տուրիզմը խրախուսվում էր թյուրքական պետությունների միջև ոչ միայն տնտեսական նկատառումներից ելնելով, այլև այն ենթադրում էր թյուրքական մշակույթի ու քաղաքակրթության ճանաչում ու տարածում, հատկապես երիտասարդության շրջանում: Այս գազաթնաժողովում գլխավոր քարտուղարի պաշտոնում Հալիլ Աքընջըլին փոխարինեց Ռամիլ Հասանովը:

Թյուրքական խորհրդի հինգերորդ գազաթնաժողովը տեղի ունեցավ Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում 2015 թ. սեպտեմբերի 11-ին: Ստորագրված հայտարարությունում վերահաստատվեց, որ հետագայում համագործակցության ամրապնդումն ու միավորումը տեղի է ունենալու ինքնության հիման վրա, իսկ դրա հիմքում ընկած են թյուրքական ժողովուրդների ընդհանուր պատմությունը, լեզուն, մշակույթը և ավանդույթները: Այս հանդիպման արդյունքում ստորագրված փաստաթղթում ևս կարևորվեց տնտեսական համագործակցությունը՝ շեշտելով տրանսպորտային հաղորդակցության և էներգակիրների խնդիրը: Առաջարկվեց ավելի մեծ թվով երիտասարդների ընդգրկել խորհրդի կազմակերպած մշակութային, կրթական ու գիտական ծրագրերում, մասնավորապես առանձնացվեցին երիտասարդական ու սպորտային նախագծերը: Այս առումով որոշվեց կազմակերպել երիտասարդական ճամբարներ: Աստանայում պայմանավորվածություններ ձեռք բերվեցին տեղեկատվության, զանգվածային լրատվության միջոցների և հեռուստատեսության բնագավառներում միասնական ծրագրերի ստեղծման շուրջ⁴⁰: Սա ենթադրում է որոշակի նպատակներով ու գաղափարներով հեռուստահաղորդումների պատրաստում ու հեռարձակում թյուրքական երկրներում, որն այս երկրների ինտեգրացմանն ուղղված կարևոր գործոն է:

Այդու՝ Թյուրքական խորհրդի հիմնադրումը նոր միտում էր թյուրքախոս երկրների գազաթնաժողովների համապատկերում, որը համապատասխանում էր տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացներին: Թյուրքական խորհրդի նպատակն

³⁹ Türk Dili Konuşan Ülkeler İşbirliği Konseyi Dördüncü Zirvesi Taslak Bildirisi, Bodrum, Türkiye, 12.04.2016, http://www.turkkon.org/Assets/dokuman/BODRUM_BILDIRISI_TR_20141021_172609.pdf

⁴⁰ Türk Dili Konuşan Ülkeler İşbirliği Konseyi Beşinci Zirve Bildirisi, Astana, Kazakistan, 12.04.2016, www.turkkon.org/Assets/dokuman/astana-tr.pdf

է որոշակի գործառույթներ ստանձնել եվրասիական տարածաշրջանում՝ մասնակցելով այդ տարածաշրջանում ընթացող գործընթացներին և համախմբել թյուրքական երկրներին: Սա, ըստ էության, թյուրքական աշխարհի ստեղծման նոր միտում է, քանի որ Թյուրքական խորհուրդը հետապնդում է այն նպատակները, որոնք առաջ էին քաշվել դեռևս առաջին գագաթնաժողովներում: Անշուշտ, նման կազմակերպության ստեղծմամբ փորձ է արվում ավելի գործնական հիմքերի վրա դնել թյուրքական երկրների միջև առկա հարաբերությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թյուրքալեզու երկրների գագաթնաժողովները դիտարկվում են հետխորհրդային տարածաշրջանում Թուրքիայի արտաքին քաղաքականության մաս և հետապնդում են հետևյալ նպատակները՝ ամրապնդել թյուրքական երկրների հետ հարաբերությունները, զարկ տալ բազմաբևեռ համագործակցությանը, հիմքեր ստեղծել թյուրքական աշխարհի ձևավորման համար, հասնել թյուրքական երկրների միասնությանը, բարձրացնել Թուրքիայի հեղինակությունը և ձեռք բերել ազդեցություն: Օգտագործելով Թուրքիայի և թյուրքական երկրների միջև առկա պատմական, էթնիկական, լեզվական ու մշակութային ընդհանրությունները՝ գագաթնաժողովներն ունեն համաթյուրքական բնույթ, քանի որ դրանց մասնակցում են միայն թյուրքական ծագմամբ երկրները: Այս ամենը նկատի ունենալով կարող ենք ասել, որ գագաթնաժողովների գաղափարական հիմքը հանդիսանում է պանթյուրքիզմը, քանզի թյուրքական միասնությանն ուղղված ցանկացած գործողություն համաթյուրքականության դրսևորում է:

Կարծում ենք, գագաթնաժողովների արդյունքներն այնքան էլ գոհացուցիչ չեն Թուրքիայի համար, քանի որ թյուրքական երկրների հետ չհաստատվեց ակնկալվող համագործակցությունը, իսկ առաջադրված ծրագրերն իրագործվեցին մասամբ: Արդյունքում Թուրքիան կարողացավ թյուրքական երկրներում հաստատել իր ներկայությունը: Կարևոր էր Թյուրքական խորհրդի հիմանդրումը, սակայն այն ևս չի ընդգրկում թյուրքական բոլոր երկրներին, ավելին՝ անդամ-երկրներն անդամակցում են տարածաշրջանային մյուս կազմակերպություններին և սերտ հարաբերություններ ունեն այլ երկրների,

մասնավորապես Ռուսաստանի հետ: Նման պայմաններում մեծ տեղ է հատկացվում կրթամշակութային ոլորտին՝ փորձելով նախ այս հիմքերով հասնել թյուրքական աշխարհի ստեղծմանը: Այսինքն՝ սա ենթադրում է հասնել միասնության հոգևոր-մշակութային առումով: Թեև թյուրքական դեկավարությունը մեծ ոգևորությամբ սկսեց հրավիրել գազաթնաժողովները, սակայն հետագայում ակնհայտ դարձավ, որ դրանք չեն կարող լուծել Թուրքիայի հետապնդած նպատակների և աստիճանաբար վերածվեցին ավելի շատ ընկերային հանդիպումների, քան միջպետական նշանակության գործողությունների: